ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԿԱԾ-ԶԹ 2019/4

ք. Երևան «04/11/» 2019թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գագիկ Միրիջանյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Դիանա Գիշյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը, Պատվիրատուի տեխնիկական պատվերի հիման վրա, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կառավարման էլեկտրոնային գործող համակարգում՝ (այսուհետ՝ Համակարգ), կատարողական վարույթների արխիվացման համար, նախագծում և ներդնում է նոր Մոդուլներ:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1, N 4 և N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ք.Երևան, Հալաբյան 41ա	ք.Երևան, Բաղրամյան 50, բն. 12
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 900013288023	Հ/Հ 1930047614510100
կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
04/11/ 2019 թ. կնքված
ՀԿԱԾ-ԶԹ 2019/4 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը / ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցե	ժամկետ
1	72211125/1	Ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ՝ կառավարման էլեկտրոնային համակարգում. 1. **Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ավտոմատ բոնագանձումներ**՝ համաձայն Հավելված N 4-ում նկարագրված տեխնիկական առաջադրանքի և **Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ՊԵԿ հարցումներ**՝ համաձայն Հավելված N 5-ում նկարագրված տեխնիկական առաջադրանքի	դրամ	1000000	1	ք.Երևան, Հալաբյան 41ա	Պայմանագրի ուժի մեջ մտնելուց մինչև 25.11.2019թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ք.Երևան, Հալաբյան 41ա
ՀՎՀՀ 01223338
Հ/Հ 900013288023
կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ

ք.Երևան, Բաղրամյան 50, բն. 12
ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 1930047614510100

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2

04/12/ 2019 թ. կնքված

ՀԿԱԾ-ԶԹ 2019/4 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72211125/1	Ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	0	0	0	0	0	0	0	0	0	0	1000000	1000000	1000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Հալաբյան 41ա

ՀՎՀՀ 01223338

Հ/Հ 900013288023

կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ

ք.Երևան, Բաղրամյան 50, բն. 12

ՀՎՀՀ 00125657

Հ/Հ 1930047614510100

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 3
04/11/ 2019 թ. կնքված
ՀԿԱԾ-ԶԹ 2019/4 *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
ՀՀ _____	ՀՀ _____
_____	_____
ՀՎՀՀ _____	ՀՎՀՀ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ _____ 2019
Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի գլխավոր քարտուղար Գագիկ Միրիջանյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Դ.Գիշյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	Ստորագրություն

ավելված 3.1
04/11/ 2019 թ. կնքված

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի գլխավոր քարտուղար Գագիկ Միրիջանյանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ ընկերության տնօրեն Դ. Գիշյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 2019 թ. _____ -ին կնքված N _____

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ստորագրություն

Հավելված N 4
04/11/ 2019 թ. կնքված
ՀԿԱԾ-ՋԹ 2019/4 ծածկագրով պայմանագրի

Պատվիրում ենք նախագծել և **Համակարգում** ներդնել **Մոդուլներ**, որի կառուցվածքը և ֆունկցիոնալությունը համապատասխանում են հետևյալ պայմաններին՝
պետք է

Ամբողջական համատեղելի լինի **Համակարգին** և ենթարկվի դրա տրամաբանությանը,

1. Երբ բանկի կողմից տրվում է դրական պատասխան, ապա կատարողական վարույթների հաշվառման էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով պետք է գեներացվի «դրամական միջոցների բռնագանձման որոշում» և ուղարկվի դրական պատասխան տված բանկ:

2. Անկախ տվյալ պահին արգելադրված գումարի չափից բռնագանձման որոշումը պետք է գեներացվի տվյալ պահին կատարողական վարույթով բռնագանձման ենթակա մնացորդ գումարի չափով:

3. Սույն կարգավորումը պետք է համակցված լինի կատարողական վարույթով իրականացվող բոլոր կատարողական գործողություններին, որոնք առնչվում են դրամական միջոցների հետ, այսինքն բաշխումը չեղարկվելիս է, կատարողական վարույթի մնացորդը ավտոմատ վերականգնվում է նախկին արժեքը:

4. Հետագայում վճարման որևէ աղբյուրից կատարված վճարումները պետք է նվազեցվեն կատարողական վարույթի բռնագանձման ենթակա մնացորդից, որի պարագայում գեներացվող բռնագանձման որոշումը կգեներացվի տվյալ պահի բռնագանձման ենթակա մնացորդ գումարով:

5. Առաջարկվող կարգավորումը հավասարապես նվազման սկզբունքով պետք է աշխատի ինչպես մեկ այնպես էլ մի քանի բանկերին բռնագանձման որոշում ուղարկելու դեպքում: Մեկից ավելի բանկերի բանկերի պատասխանների առկայության դեպքում պետք է հաշվի առնել պատասխանների ստացման հերթականությունը : Եթե նույն օրն են դրական պատասխանել մի քանի բանկ, ապա պատահական կարգով է ընտրությունը կատարվում :

6. Երբ կատարողական վարույթով կատարվում է պարտապանից բռնագանձված և արդեն իսկ բաշխված դրամական միջոցների վերադարձ (բաշխած գումարի չեղարկում), ապա տվյալ կատարողական վարույթի բռնագանձման ենթակա մնացորդ գումարը պետք է վերականգնվի, ինչը նույնպես հնարավորություն կտա բռնագանձման որոշումը գեներացնել ճշգրիտ:

7. Երբ բռնագանձման որոշման պահանջը կկատարվի ամբողջությամբ, ապա պետք է վերացնել տվյալ կատարողական վարույթով դրամական միջոցների վրա կիրառված արգելանքները բացառությամբ այն դեպքերի, երբ կատարողական վարույթով նախատեսված է բռնագանձել պարտավորության տոկոսագումարներ:

8. Բռնագանձման որոշումը գեներացվում է պատասխանների ներմուծման հերթականությամբ:

9. Նշված կարգավորումները կիրառելի չեն այն դեպքերում, երբ կատարողական վարույթը կասեցված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1 կետի, 2 – 4, 6, 7, 9 և 10-րդ մասերով նույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետով, այն հետաձգված է, կամ ավարտված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1 կետի 5, 5.1 և 5.2 մասերով: Մասնավորապես ԴԱՀԿ համակարգում նշված կոդերով բնույթների դեպքում կիրառելի են ավտոմատ բռնագանձումները՝ '01','02','03','04','05','06','07','08','09','10','11','12','13','14','15','16','17','37' : Հոդվածները որոնց դեպքերում կիրառելի չեն ավտոմատ բռնագանձումները՝

Կասեցված – '37.2', '37.3', '37.4', '37.6', '37.7', '37.9', '37.10', '38.1'

Հետաձգված – կիրառելի են բոլոր հոդվածների համար

Ավարտված - '41.1.1', '41.1.5', '41.1.5.1', '41.1.5.2'

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ք.Երևան, Հալաբյան 41ա	ք.Երևան, Բաղրամյան 50, բն. 12
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 900013288023	Հ/Հ 193004761451010 0
կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 5

Հավելված N 5

04/11/ 2019 թ. կնքված

ՀԿԱԾ-ԶԹ 2019/4 ծածկագրով պայմանագրի

Պատվիրում ենք նախագծել և **Համակարգում** ներդնել **Մոդուլներ**, որի կառուցվածքը և ֆունկցիոնալությունը համապատասխանում են հետևյալ պայմաններին՝
պետք է

Ամբողջական համատեղելի լինի **Համակարգին** և ենթարկվի դրա տրամաբանությանը,

1. Նախատեսել , որ հարցումը կատարվի կատարողական վարույթի խմբագրման վիճակում, սակայն չբացառել վարույթի կատարման ընթացքում կրկնակի հարցում կատարելու հնարավորությունը:
2. Ընդլայնել ներկայումս կատարվող հարցումների միջոցով պարտապանների վերաբերյալ հայցվող տեղեկատվության ծավալները համաձայն «ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունը սպասարկող ՎԵԲ ծառայություն» տարբերակ 1.0 -ի արձանագրության
3. Ներդնել, թե հարցման, թե պատասխանի դեպքում տպման նոր ձևաթղթեր:
4. «ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունը սպասարկող ՎԵԲ ծառայություն» տարբերակ 1.0 -ի արձանագրության հնարավորության սահմաններում հաստատված կատարողական վարույթով բանկեր արգելանքներ կիրառելիս հաշվի առնել ՊԵԿ-ի տրամադրած տեղեկատվությունը, և որոշումները գեներացնել գործատուի հաշվեհամարը ներառելով համապատասխան դաշտում:
5. Հարցումները անհրաժեշտ է գեներացնել պարտապանի ՀԾՀ-ով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	«Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ
ք.Երևան, Հալաբյան 41ա	ք.Երևան, Բաղրամյան 50, բն. 12
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 00125657
Հ/Հ 900013288023	Հ/Հ 19300476145101 00
կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ